

3131

891.995

L-61

1885

891.5

737

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ:

ՔԱՋ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ԿՈՄԵՏԻԱ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Փ Ո Ւ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ստեփաննոս Լիսիցեանցի

Գ/նն է 10 Կ.

1

Տ Փ Խ Ի Ս

#

2003

Տ Պ Ա Ր Ա Ն Մ. Ռ Օ Տ Ի Ն Ե Ա Ն Ց Ի

1885

891.995

L-61 58

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ:

ՔԱՋ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ԿՈՄԵՏԻԱ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Փ ՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ

Ստեփանոս Լիսիցկանցի

1

Տ Փ Լ Ի Ս

Տ Պ Ա Ր Ա Ն Մ Ռ Օ Տ Ի Ն Ե Ա Ն Ց Ի

1885

1001
4781
1874

7



Дозволено цензурою, Тифлисъ, 1885 г. 20 Марта

† Քեզ, իմ սիրելի բոյր, քո բարի յիշատակին, Սրբուհի,
նուիրում եմ ես այս մանկական պիեսան: Դու սիրում էիր
մանուկ երեխաներին, դու նրանց մէջ շատ ընկերներ ունէիր:
Ամեն բան, ինչ որ նրանց համար էր, դու քեզ մօտիկ էիր ըն-
դունում: Ընդունիր ուրեմն եւ այս «Քաջ զինուորները» եւ բա-
րեխօս եղիր հայ մանկանց համար Ամենակալ Ստեղծողիդ առաջ:

Ստեփաննոս:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ:

Մեր և օտար ազգերի մանկավարժական թերթերի և զրքերի մէջ շատ անգամ յայտնուել է այն միտքը որ մանկական թատրոնը փտանդաւոր է և ֆլասակար: Ասում էին իբր թէ՝ մանուկին դուրս բերել ընտանեկան շրջանից և տանել զանազան հասարակական տեղեր, ինչպէս են՝ մանկական թատրոններ, խնձողքներ, տօնաճառեր և այլն. դերեր կատարել տալ նրանց այսինքն ձեռքնել տալ տեսածը-այդ բոլորը՝ շատ զբաղեցնելով մանուկի միտքն ու խելքը, խլում է երեխային նորա դասերից. իբր թէ՝ նախանձ և ուրիշ կրքեր են դրանից յառաջանում: Այսպիսի մի կարծիքում իսկոյն երեւում է չափազանցութիւն: Մասամբ համաձայն ենք, որ մանկական թատրոնը և խնձողքները այդպիսի ներգործութիւն կարող են ունենալ, բայց ոչ միշտ, այլ միայն այն դէպքերում, երբ դրանք յաճախակի են և անյարմար ժամանակ, երբ երեխան հա-

մարեա թէ ամեն ամիս) ամեն շաբաթ այցելում է այդպիսի տեղերը) իսկ տարէնը մէկ կամ երկու անգամ այդպիսի զուարճութիւնները ոչ թէ փտանգաւոր և ֆեստական են, այլ ընդհանրապէս անհրաժեշտ, որովհետեւ պահել մանուկի միտքն ու խելքը միայն դասերի շրջանում նշանակում է միանգամայն ձանձրացնել երեխային, թարամեցնել նորա քնքոյշ ոյժերը, անհրաժեշտ են ասում ենք, որովհետեւ մանկան ձգտումը դէպի նորը, դէպի իւր տպաւորութիւնները և հայեցողութիւնը լայնացնելը ստանում է բաւականութիւն) պաշար հետզհետէ աւելի զարգանալու. այդպիսով երեխան դուրս է գալիս իւր ընտանեկան շրջանից և փոքր ինչ մտնում հասարակութեան մէջ, բայց միայն իրեն պէս երեխաների հասարակութեան մէջ: Այս վերջինի այսինքն՝ ընտանիքը և հասարակութիւնը մանկավարժութեան մէջ միաւորելու կարեւորութիւնը խոստովանում է նոյնպէս և Ֆրեօբէլը հակառակ Պետալոցցուն և Ղօքէին, որոնք ընդունում են միայն ընտանեկան կրթութիւնը, և հակառակ Ֆրիտտէին, որը հաւատէ ընծայում ընտանեկան կրթութեանը և հասարակականը աւելի բարձր է դասում:

Ինչպէս ուսումնարանը) նոյնպէս և մանկական խնայքները և թատրոնը աւելի զարգացնում են երեխաների մէջ ընկերակցական ոգին և ծանօթացնում կեանքի հետ, դիտաւորապէս ընկերների) հասակակիցների բնաւորութեանց հետ: Այդ առաջին քայլ է դէպի գիտակցական յարաբերութիւնը մարդ-

կանց հետ, որը այնպէս կարեւոր է և օգտակար ամեն անհատի համար իւր կենցաղավարութիւնը հաստատելու: Գիտողութիւնը միշտ գտնում է այդպիսի զուարճութեանց մէջ հարուստ նիւթ իրեն զարգացման համար և այն բնական մարդկային յատկանիշը, որով մենք՝ նամանաւանդ երեխան, ձրգտում ենք բոլոր սեռածը լւարացնել և յետոյ նորան նմանեցնել ակամայ, անգիտակցաբար հրաւիրում է երեխային կապելութիւն անելու, ձեացնելու ուրիշի ձայնը, շարժուածքները, դէմքի արտայայտութիւնը և այլն) Առհասարակ անսխալ կարելի է ասել, որ այն երեխան աւելի դիտող, առարկաների, կենդանիների և մարդկանց վերայ աւելի ուշադրութիւն դարձնող, նրանց աւելի հետազօտող և նրանց յատկութիւնները աւելի ըմբռնող է, որն որ աւելի դիւրին է կարողանում ձեացնել նրանց, դորանով է արտայայտւում երեխայի պայծառ պարզ երեւակայութիւնը: Ներկայացման երեխանների մասնակցելը պէտք է որ զարթեցնէ նրանց մէջ մի այդպիսի ձգտում, աշխատանք նմանեցնելու ծանօթ մանուկներին, որոնց տիպարները դուրս են բերած պիեսայում, որովհետեւ բեմակար այսինքն գեղասանական արհեստը ոչինչ այլ է քան կարողութիւն լաւ և գեղարուեստաբար ներկայացնելու դերերով արտայայտած անձնաւորութիւնները: Հետեւապէս մանկական թատրոնը պէտք է որ զարգացնէ դիտողութիւնը և նորա արտայայտութիւնը զուգընթացաբար, ստիպէ մանուկին աւելի ուշք դորձնել շրջակայքի վերայ և նշմարել նորա ամենաբա-

բակ գծերը, կողմերը:

Մեր այս խօսքերից պարզ է, որ մանուկներին հարկաւոր է աւալ նրանց հասկացողութեան համաձայն դերեր ներկայացնելու և մեծերի գերերը՝ հայերի, մայրերի, տատերի, պապերի և այլն, որոնցից զուրկ չէ մանկական պիեսաների մեծ մասը, չը պէտք է նրանց յանձնել, որովհետեւ նրանք այդպիսիների կեանքի հետ դեռ լաւ ծանօթ չեն կամ ծանօթ են աւելի քիչ քան մանկական կեանքի հետ: Այդ հարկաւոր է անել նոյնպէս այն դիտաւորութեամբ, որ մանուկը չը սովորի մեծ մարդ ներկայացնել իրենից, մի պակասութիւն, որից ազատ չեն մեր երեխաներից շատերը: Սովորելով մեծելն նմանեցնել իրեն ցոյց տալ իբրեւ հասակաւոր մարդ, մանուկը կորցնում է իւր տարիներին յատուկ պարզութիւնը և երեւակայութեան ու մտքերի նրբութիւնը: Նա հակառակ իր բնական պարզամտութեանը սկսում է կեղծաւորել և դիմակաւորուել ուրիշների՝ իրենից շատ տարբերների դիմակով:

Ասում են, որ մանկական թատրոնը ծնեցնում է նախանձ երեխաների մէջ: Ուղիղ է արդեօք այդ: Երբ մանուկները դուրս են հանում հանդիսականների դատաստանի առաջ, որ ցոյց տան իրենց ընդունակութիւնները, յառաջագիմութիւնը, ի հարկէ շատ հաւանական է, որ ծնւում է երեխաւորների մէջ ընկերներին գերազանցելու ցանկութիւնը, աւելի նկատելի լինելու փափագը, այսինքն յառաջանում է նախանձ և թատրոնը, որտեղ աւելի յոջողակ և հեշտ կարելի է արտայայտել իւր տաղան-

դը շնորհքը՝ աւելի պէտք է որ զարգացնէ այդ նախանձը: Բայց արդեօք վատ բան է այդ: Այո՛ւ և ո՛չ: Նայելով թէ ինչպէս կը քուէարկենք այդ խնդիրը: Այո՛ւ, եթէ այդ նախաձեռնութեամբ է իւր հետեւանքներով, եթէ այդ գերազանցութիւնը ձեռք է բերում ընկերոջը ստորացնելով, նրա խաղարկութեանը խանգարելով, եթէ ներկայացնողը նկատելի է դառնում, երբ ընկերը վայր է ձգած նրա շնորհքով: Ո՛չ, եթէ այդ նախանձը գրգռում է նրան իրեն ընկերից լաւ խաղալ, եթէ ընկերոջը թողած ինչպէս կուզէ խաղալու, ինքը աշխատէ նրանից բարձրանալ, այդ տեղ յառաջանում է բարի նախանձ՝ մրցումը, առանց որի ոչինչ չի գնում յառաջ: Այդ մրցումն է, որ յառաջ է մղում մեր քաղաքակրթութիւնը, աւելի կանոնաւորեցնում է պետութեանը, դասակարգերի յարաբերութիւնները, զարգացնում է գիտութիւնը, արհեստը, հնարել է աւելի զանազան մեքենաներ, որոնցով կարելի կը լինէր գերազանցել ուրիշների գործուածքները և այլն: Կաստոնական թուանշաններն էլ հենց դրա համար են. միայն յաճախ գործածելուց դրանք դառնում են միակ շարժառիթ աշակերտի աշխատասիրութեանը և երբ դադարում է դրանց ներգործութիւնը, աշակերտը այլևս չի կարողանում աշխատել, եթէ սէր չունի դէպի ուսումը: Նոյնպէս հարկաւոր է ծնեցնել մանուկների մէջ այդ սէրը և դէպի թատրոնը և միացնել այդ զգացմունքը մրցման զգացմունքի հետ, որ երեխաները ոչ թէ նկատելի լինելու համար դուրս գան բեմ, այլ նորա հա-

մար) որ սիրում են թատրոնը: Այդ հեշտ է անել
որովհետև ամեն մարդու մէջ, ինչպէս ասացինք,
բնութիւնը դրել է սէր դէպի ուրիշներին ձեւացնե-
լու, սէր) որը երեւում է նամանաւանդ նորա մէջ,
որ երբ մենք կրկնում ենք ուրիշն խօսքերը, սի-
րում ենք նորա ձայնով, շարժուածքներով, արտա-
յայտութեամբ այդ անել:

Բայց այդ նախանձը, մրցումը բարի թէ՛ չար,
գովելի թէ՛ նախատելի աղբիւրից է յառաջանում, այդ
կախուած է այն ուղղութիւնից, որ տալիս է երե-
խային ընտանիքը կամ ուսումնարանը: Եթէ նա
սովորել է իւր գլխաւորութիւնը, գերազանցու-
թիւնը ձեռք բերել ուրիշին ստորացնելով, նա բե-
մի վերայ էլ այնպէս կը վարուի. եթէ ոչ, բոլո-
րովին հակառակ և կաշխատէ աւելի լաւ ներկո-
յացնել, աւելի ուշադրութեամբ վերաբերելով իւր
դերի ամեն կէտին: Ուրեմն մեղադրել թատրոնը
նրանում, որ նա ծնեցնում է վատ նախանձ, աւե-
լորդ է և անտեղի, նամանաւանդ եթէ ներկայացու-
մները չեն պատահում յաճախ և այդպիսով չեն
սովորեցնում բեմի բոլոր ինտրիդաները, որոնք
պէտք է ասած և այնպէս էլ երբէկ չեն կարող
տեղի ունենալ, յառաջանալ մանուկների մէջ:

Ներկայացմանց յաճախակի կրկնուիլը 'ի
հարկէ կը խաղաղէ սովորական պարապմունքները
և կը ցրէ մանուկի խելքն ու միտքը. բայց սակաւ
նրանք մեծ օգուտ կը բերեն երեխային, զուարճա-
ցնելով նրան և օգտակար նիւթ տալով նրա ու-
ղեղն զործունէութեանը, եթէ միայն պիտան բա-

րդական որեւիցէ մտքով է զրաժ: Այդպիսի ներ-
կայացմանց համար ամենայարմարաւոր ժամանակն
են Զօրհնէքի և Զատիկի երկուշաբթեայ տօ-
ները, երբ դասատուութիւնը ընդմիջվում է ու վը-
տանգ չը կայ մանուկին դասերից խլելու:

Մանկական թատրոնը նամանաւանդ մեզ հա-
յերիս համար, անհրաժեշտ է) որ մենք հազիւ հազ
կարողանում ենք գտնել թատրոնասէրներ երիտա-
սարդների մէջ, գլխաւորապէս աղջիկների մէջ, ու-
րովհետև ընտանեկան աւանդութիւնները և ծնո-
ղական շատ անգամ կոյր և տղէտ հոգատարու-
թիւնը բոլոր զօրութեամբ դեռևս թագաւորում են
մեր մէջ: Մեզ մօտ աղջկայ համար բեմ դուրս գալը
ամօթալի բան է համարւում՝ նամանաւանդ գա-
վառներում և հենց երեխայութիւնից աղջկան բե-
մին ընտելացնելը ժամանակով կարող է մի քանի
թատրոնասիրութիւններ տալ մեզ: Կը սկսեն ներ-
կայացնել ընտանիքներում, ուսումնարաններում
(որտեղ ներկայացումը ընտանեկան բնաւորութիւն
ունի) և յետոյ կը վստահանան հրապարակական
բեմ դուրս գալ: Միւս կողմից՝ սիրեցնելով երեխային
թատրոնը, մենք կամաւոր հանդիսականները կը
պատրաստենք դրանցից ապագայի համար, որովհե-
տև մեծանալով դրանք միշտ զուարճութիւն կը
գտնեն թատրոնը այցելելով, իսկ այժմ՝ լաւ յայտ-
նի է մեզ ամենքիս, ինչ պէս փոքր է այդպիսիների
թիւը հայերի մէջ:

Մանկական թատրոնը, դէպք տալով ծնող-
ներին մի անգամով աւելի այցելելու ուսումնարա-

նը և ծանօթանալունրա յառաջագիմուծեան հետ
(եթէ այդպիսի ներկայացմանը ուսումնարանի աշա-
կերտներն են մասնակցում), աւելի սերտ կը կապե-
լնտանիքը ուսումնարանի հետ, կաճեցնէ ծնողնե-
րի յարգանքը, համակրութիւնը դէպի ուսուցչա-
կան խումբը:

Բոլորն այս 'ի նկատի առնելով, մենք չենք գը-
տնում մանկական թատրոնը վտանգաւոր և վնաս-
ակար, գոնէ այն վնասը, վտանգը, որ դա կարող
է պատճառել ոչինչ է դրա տրուած օգտի առաջ,
և թէ միայն 'ի չար գործ չը դնեն դրան և դասա-
տան ու նստարանների հետ ծանօթ աշակերտների
փոխանակ չը դարձնեն երեխաներից թատրոնին և
բեմին ծառայող զերասաններ:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԼԻՍԻՅԵԱՆՑ

1885 թ. 16 Յունիսի:

Տէրի:

ՔԱՁ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ՔԱՋ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Կոմեդիա մէկ արարուածով.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

ՎԱՐԴԱՆ:

ՏԻԳՐԱՆ:

ՍԲԳԱՐ:

ԳԱՅԵԱՆԷ:

ԵՐՈՒԱՆԴ:

ՄԱՐԳԱՐԻՏ:

Տղաներ և աղջիկներ 6-12 տարեկան:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ:

Սէնէալ էրէն հանդիպակաց դահլերով: Բէժով անց-
նում էն մի խումբ էրէնայ՝ տղաներ և աղջիկներ, զինու-
ած փայտ՝ հրացաններով և դաշոյններով, գլխին լեղիէ
գլխարկներ, զարդարում գոյնգոյն նշարներով: Սէնը ա-
ծում է լեճում: Վարդանը ամենից ասում էրէնայացիում
է գլխարկին:

ԵՐԵՒԱՆԵՐ (Տեաշայն)

Մէկ—Երկու, մէկ—Երկու, մէկ—Երկու.....

ՎԱՐԴԱՆ:

Կանգնեցէ՛ք: Ուղղուեցէ՛ք (Երեւանէրը չափաւորապէս Վարդանի հրամանը: Վարդանը հարցրո՞ւ հարցրո՞ւ զիսկո՞ւմ է ի՞նչ խոսէ՞ր): Չորս չորս: Դէպի աջ, դէպի ձախ, դէպի աջ, դէպի ձախ. դէպի աջ, դէպի ձախ. դէպի աջ.....

ԵՐՈՒԱՆԻ:

Այս ինչպիսի մեծաւոր է, դիմ միւսնոյն է աւու՛մ: Այսպէս չի լինի՛, չէ՛:

ՎԱՐԴԱՆ:

Չը խօսել. կատարի՛ր ինչ որ հրամայում են:

ԵՐՈՒԱՆԻ:

Ի՞նչ է, մենք մի՞շտ ձախ և աջ պէտք է դառնանք: Այդպէս իսօ չենք էլ վերջացնի: Չե՛մ ուզում այդպէս խաղալ (նստաւոր է անհաշի վերայ):

ՏԻԳՐԱՆ:

Դրան հարկաւոր է խիստ պատժել. դա մեր մեծին չի լսում:

ՎԱՐԴԱՆ:

Դու զիտե՞ս թէ ևս ով եմ: Ես ինքս ամենա-

մեծն եմ, ամենազիւաւոր գեներալն եմ:

ԵՐՈՒԱՆԻ:

Օհ, օհ, շատ մեծ բան ես կարծումք ողուխդ:

ՎԱՐԴԱՆ:

Ձինուորներ, մենք ո՞ր զորախումբն ենք:

ՄԻ ՔԱՆԻՍԸ:

Հնդկաստանի՛

ԱՐԳԱՐ:

Ղարաբաղի՛

ՎԱՐԴԱՆ (վերադառնալով)

Ապա թէ դէք էլ բա՛ն էք ասում:

ՄԱՐԳԱՐԻՏ:

Աւելի լաւ է՝ Սուլթանի՛: Սուլթան անունը ևս շատ եմ սիրում:

ԵՐՈՒԱՆԻ:

Այդ էլ ի՞նչ ես հնարել: Սուլթանը իսօ թուրքաց թագաւորն է, դու ուզում ես թո՞ւրք լինել:

ԱՐԳԱՐ:

Ես կը լինեմ, ևս բաշխուղուկ կը լինեմ:

ՏԻԳՐԱՆ:

Այլ լաւ միտք. զիտե՞ք ինչպէ՛ս խաղանք: Թող մեզանից մի քանիսը ունենր ու հայեր լինեն, մի քանիսն էլ թուրքեր:

ՄԻ ՔԱՆԻՍԸ:

Մենք թուրք չենք լինի. հարկաւոր չեն թուրքերը:

ԱԲԻԱՐ:

Ար լինե՛նք, կը լինե՛նք: Ես մեծ վեղերը կը լինեմ, ես մեծ վաշայ կը լինեմ:

ՎԱՐԴԱՆ:

Շատ լաւ. իսկ ես կը լինեմ Տէր Ղուկասեանցը և կը հրամայեմ իմ ղինուորներին, որ քեզ բռնեն: Տղայ՝ք, բռնեցէ՛ք այդ քաջ փաշային, դերի առէ՛ք դրան, դերի՛: (Երէկոսեքը ուղղո՛ւմ է Բահէլ Աբգարին) Բայց վայր էն գոռո՛ւմ նրան):

ԵՐՈՒԱՆԴ:

• Այդ ինչ էք անում. ամենքդ մէկի վերայ էք ընկել: (Աբգարը Բարչքանոսէ և ուղղո՛ւմ է.)

ՏԻԳՐԱՆ:

Ոչե՛նչ. պատերազմում ամեն բան պատահում է:

ԵՐՈՒԱՆԴ:

Ամբողջ զօրքը մէկի յետեից երբէ՛կ չի ընկնում: Մենք էլ խօ ճշմարիտ չենք պատերազմում: Դուք այդպիսով դորա քինթ ու պոռնոզը կը ջարդէք և դա կը սիսի լաց լինել: Նկէք աւելի լաւ է այսպէս խաղանք. բաժանուէ՛նք երկու մասի և գնանք զանազան կողմեր սենեակներով և որտեղ որ կը հանդիպենք, այնտեղ էլ կը պատերազմենք: Տեսնենք՝ ով կը յաղթի:

ԵՐԵՒԱՆԵՐ (ուրախ)

Շատ լաւ, շատ լաւ: Այդպէս անենք:

ՎԱՐԴԱՆ:

Միայն մեզանից թուրք ո՞վ կը լինի. բացի Աբգարից ոչոք խօ՛չի ուղղում:

ԵՐՈՒԱՆԴ:

Էհ, ոչե՛նչ. մենք միայն խաղում ենք և ճշմարիտ չենք պատերազմի. եթէ ոչ, թող այնպէս

երկու զանազան մասի բաժանուէնք:

ԱՅԳԱՐ:

Ես անպատճառ կը լինեմ գլխաւորը եւ ինքս
կը տանեմ իմ զօրքերը՝ այ այսպէս. մէ'կ-ե'րկու,
մէ'կ-ե'րկու, մէ'կ....

ՏԻԳՐԱՆ:

Մենք դեռ կը տեսնենք, ով կը լինի գլխա-
ւորը: Տեսնենք, քեզ կը նշանակեն թէ ոչ:

ԱՅԳԱՐ:

Ի՞նչ տեսնենք. ես այդպէս ուզո՞ւմ եմ:

ՎԱՐԳԱՆ:

Լա՛ւ, գլխաւոր ես. մոմբը որ հանգցնենք,
խսկոյն կը վախենաս. ապա ես չը գիտեմ քո բնա-
ւորութիւնը:

ԵՐՈՒԱՆԴ: (ընդհատելով)

Լա՛ւ, շատ մի' խօսէք: Եկէք դեռ համարենք՝
որքան ենք, իսկ յետոյ բաժանուէնք երկու մասի:
(Կազմ: Են ինչ շրջան եւ Երոստանդը Բարձր Կոմարում
է, ցոյց պաշտօն մեն ձեռք վերայ հարով)

ՎԱՐԳԱՆ:

Շատ լա՛ւ. հիմա բաժանուէնք այնպէս, որ ա-
մեն մի մասում հաւասար լինի: Տղայք, ապա ո՞վ է
գալիս իմ կողմը. ես նորից կը լինեմ գլխաւորը:

ԳԱՅԵԱՆԷ:

Ես վարդանի՛ հետ կը լինեմ, վարդանի՛ հետ:

ԵՐԵՒԱՆԵՐ (յայտարարելով)

Ես վարդանի՛ կողմն եմ, ես վարդանի՛ հետ եմ:

ՏԻԳՐԱՆ:

Շատ լաւ. ապա ո՞վ կը լինի ուրիշ մասում:
Երեւի՛ քաջ Աբգարի հետ ոչոք չի ուզում գնալ:

ԳԱՅԵԱՆԷ:

Աւելի լաւ է, որ Աբգարը չը լինի: Թող Ե-
րուանդը նորա տեղը բռնի:

ԱՅԳԱՐ:

Ես ոչոքին չեմ թողնի: Ես անպատճառ ու-
զում եմ լինել գլխաւորը. եթէ ոչ, չեմ խաղայ:

ԵՐՈՒԱՆԴ:

Դէհ, թողէ՛ք որ լինի. իսկ մենք բաժանուէնք

երկու մասի և վիճակ գցենք վարդանի և Աբգարի մէջ, որը որ մասի հետ զնայ (Բաժանում է երեք տաներին այնպէս, որ Տէ՛հ Տառում շինում էն Գայեանէն և Մարգարիտը, իսկ Տրառում Տեգրանը): Եկէք հիմա վիճակ գցենք:

ՎԱՐԴԱՆ.

Չէ՛, զիտես՝ աւելի լաւ է, թող Տիգրանը երկու ձեռները բարձրացնի և յետոյ մեր նշանով մէկը իջեցնի: Իսկ մենք այստեղ նշանակենք թէ՛ որ ձեռքի իջնելը ինձ կամ Աբգարին որ մասի զխաւոր պէտք է դնէ:

ԵՐՈՒԱՆԴ:

Դատ լա՛ւ: Տիգրան, դնա՛ մի փոքր հեռու և երկու ձեռներդ էլ բարձրացրու: (Տեգրանը գնում է. Երոանդը փոխում է Աբգարի և Վարդանի աշանջին: Տեգրանին՝ Որ ձեռքդ էլ ուզում ես՝ իջեցրո՛ւ: (Տեգրանը մի յետքը իջեցնում է) Վարդանը Գայանէի և Մարգարիտի մատուցն է, Աբգը ըր մեր մատում:

ԳԱՅԵԱՆԷ:

Լաւ նայեցէ՛ք Աբգարին. չը լինի թէ լաց լինի: Դա առանց դայեակի ոչինչ չի անում:

ԱԲԳԱՐ:

Դու ինքդ ես այդպէսը. ես միշտ միայնակ եմ գրօնում և ոչինչ չեմ վախենում: Ուզում եմ, վառարանն էլ կը մանեմ:

ՎԱՐԴԱՆ:

Ա՛յ թէ քաջ ես. մէջը երևի սրբել ես ուղում: (Երեկոները ծիծաղում էն):

ԵՐՈՒԱՆԴ:

Ինչո՞ւ էք ՚ի զուր ժամանակը կորցնում: Բա՛ ժանուկներ շուտով, շուտով:

ՎԱՐԴԱՆ:

Ահա գնում ենք գնում: Ճանապահ, տղայք: Թմբուկը ածեցէ՛ք: (Վարդանի Տառը գնում է ոջ դռներով ստելով) Մե՛կ-ե՛րկու, մե՛կ-ե՛րկու:.....

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԱԲԳԱՐ:

Հիմա մեր գնալու հերթն է: Մենք թմբուկ չունենք, ես ինքս կը բրբռացնեմ. բրբ՛րր..... Մենք զիտէ՞ք մէկով աւելի ենք:

ՏԻԳՐԱՆ:

Ի՞նչ կայ, որ մէկով աւելի ենք. թուրքերը պատերազմում թող երկու անգամ էլ աւելի լինեն, բայց նրանց էլի կը ջարդեն: Ե՛յ, Ազիզ փաշայ, եթէ դու վատ կը կառավարես, մենք քեզ կը ծեծենք և կը թողնենք:

ԱՐԳԱՐ:

Շատ լա՛ւ. առանց քո սովորեցնելն էլ բանա լա՛ւ գիտեմ, քեզանից դաս չեմ առնի: Ե՛ս գիտեմ, ինչպէս կը կառավարեմ: (Առաջ հանելով ձէռքը, չափ չեռքը կառնում է հողմին) Իսէ աջը առաջ պարզում, Ի՞նչպէսն եմ, ո՞րտեղ ինչպէս քաջը կը զանէք, ո՞րտեղից կը ճարէք ինչպիսի զըլխաւոր: Ես ոչինչի՛ց չեմ վախենում:

ԵՐՈՒԱՆԻ:

Գիտե՛նք, գիտե՛նք. քաջ ես, խօսք չը կայ. միայն հիմա գործը դրանում չէ:

ՏԻԳՐԱՆ:

Իւր տեղը քաջացիր, այստեղ ի՞նչ ես պարծենում:

ԵՐՈՒԱՆԻ:

Գիտե՛ք հիմա ինչ է հարկաւոր անել: Թող

Վարդանը իւր զօրքով աւելի հեռանայ, իսկ մենք գնալու փոխանակ թագ կենանք միւս սենեակում. երբ նրանք անցնելիս կը լինեն, մենք յանկարծ վրայ կընկնենք և կը ջարդենք: Լա՛ւ է:

ԵՐԵԹԱՆԵՐ:

Լա՛ւ է, լա՛ւ. հիանալի է, կեցցէ՛, կեցցէ՛, երուանդ:

ԱՐԳԱՐ:

Ես նրանց այն ժամանակ ա՛յ ա՛յսպէս կը ծեծեմ, ա՛յսպէս (խփում է չեռքը չեռքին).

ՏԻԳՐԱՆ:

Ար տեսնե՛նք, կը տեսնե՛նք քո քաջութիւնը. մեզ խօ՞ք քեզ ազատելու չես կանչի:

ԱՐԳԱՐ (արհամարհանալով):

Շատ հարկաւոր է. ՚ի հարկէ չեմ կանչի:

ԵՐՈՒԱՆԻ:

Գնանք, տղայք, շուտով թագ կենանք. եթէ ոչ, մեզ այստեղ կը զանեն: Թագ կացէք աթոռների յետեւ, մի քանիսն էլ սեղանի տակ: Գը՛

նանք զնա՛նք.... կամա՛յ: կիմանան:

ԵՐԵԽԱՆԵՐ:

Կամա՛յ: կամա՛յ: Ա՛խ, մի՛ թղիթ զկայնէք (Գը-
նում էն չախ: Բէ՛ն քում է թ չախն բողէ դադարէ:
Աջ դռնէրից յեպոյ ներս էն հոնում համայ վարդառնի
շորէրը:)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ:

ՎԱՐԳԱՆ (ցածր)

Կամա՛յ: զինուորներ: կամա՛յ: Մենք այստեղ
թագ կենանք, իսկ նրանք թող մեզ պըտրտեն սե-
նեակներում: Երբ այստեղ կը դան, մենք յանկար-
ծակի վըայ կը թափուենք և կը ջարդենք: Նրանք
այդ չեն ել մտածի: Դէ՛հ, թագ կացէ՛ք, միայն այն-
պէս, որ չերևաք:

ԳԱՅԵԱՆԷ:

Ե՛ս պահարանի յետեւ թագ կը կենամ
(Լափնում է):

ՄԱՐԳԱՐԻՏ:

Իսկ ես կը նստեմ բազկաթռի յետեւ յա-
տակի վըայ (Լափնում է):

Մ Է Կ Ը:

Օգնե՛ցէք ինձ պահարանի վերայ բաժրանա-
լու. ինձ այնտեղ ոչոք չի գանի: (Օդնում էն)

ՎԱՐԳԱՆ:

Կարծեմ լաւ կը լինի, եթէ մոմերը հանգ-
ցնեմ: մեզ այն ժամանակ բոլորովն չեն տեսնի (Հանգ-
ցում է): Իսկ հիմա ես ինքս կը թագնուեմ (Լափ-
նում է):

ԳԱՅԵԱՆԷ (Թ փոքր լսում է ներսից յեպոյ)

Մարգարիտ, ես խօ՞չեմ երևում:

ՄԱՐԳԱՐԻՏ:

Սո՛ւս, կամա՛յ: Չես երևում: Իսկ ես՞:

ԳԱՅԵԱՆԷ

Դու ել չես երևում:

ՎԱՐԳԱՆ:

Այս ինչո՞ւ այսպէս ուշացան:

ՄԷԿԸ (պահարանից)

Երևի Տիգրանը կռուել է զխաւորի հետ:

ՎԱՐԴԱՆ:

Կամայ՝ կըլտեն: Գնամ իմանամ թէ՛ ինչ
են անում:

ԳԱՅԵԱՆԷ:

Ուղում ես, ես կերթամ քո փոխանակ:

ՄԷԿԸ (պահարանից)

Աւելի լաւ է՝ ես կերթամ. ես շատ կամաց
կերթամ:

ՎԱՐԴԱՆ:

Ո՛ւ, ես ինքս կերթամ. դուք ձեր տեղերումը
մնացէք: (Գոբոս է գալիս առնուի յետեւից և չորս պի
Չէրայ գնում դէպի չախ: Գիմացի դռնէրից գալիս է
Աբգարը, չեաները առաջ պարսկած)

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐԳԱՐ:

Ա՛խ, ինչո՞ւ դառայ ես զլիսաւորը. չէի դառ-
նայ, եթէ իմանայի, որ մուլթ սենեակում պէտք է
մնն գամ: Վայ, ո՞վ է այստեղ մոմերը հանգցրել:
Ա՛յ, այ՛, այ՛, կարծեմ, այնտեղ անկիւնում մէկը
շարժւում է: Աւելի լաւ է՝ յետ դնամ: Կերթամ
կասեմ, որ ոչ ոք չը կար: Բայց այն չար

Տիգրանը ի՞նչ կասէ. նա ինձ վերայ խօ՞ւր ծիծա-
ղի, նա միշտ ինձ վերայ ծիծաղում է: (Գիպէլով
Վարդանին) Վա՛յ, վա՛յ, գողե՛ր են, գողե՛ր են,
ազատեցէ՛ք, վա՛յ, վա՛յ:

ՎԱՐԴԱՆ: (արագ)

Ո՞վ է այդ, ո՞վ է: Մարգարիտ, դո՞ւ ես, ի՞նչ է
պատահել:

ԱՐԳԱՐ:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ:

ՎԱՐԴԱՆ:

Վերջապէս ո՞վ ես, ի՞նչ ես անում:

ԱՐԳԱՐ:

Մայրիկ, մայրիկ, ազատի՛ր, գողե՛ր են (նրա
դռն է յապառի վերայ, և երեւոյ ծածկելով լալիս):
Մայրիկ, ինձ սպանում են, ինձ խեղտում են:
(Մարգարիտը հարստ է բաղնիցի դռն)

ՎԱՐԴԱՆ:

Ա՛խ, Աբգարն է բղաւում: Ի՞նչ է պատահել
քեզ, ո՞րտեղ են գողերը, ինչո՞ւ ես լաց լինում: (Ներս
էն վաղա՛հ երեխաները: Երեսնները հո՛մ է բերում):

ՏԵՍԻՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

ԵՐԵՄԱՆԻՐ:

Ի՞նչ է պատահել ի՞նչ է պատահել: Աբգար,
ինչո՞ւ ես լաց լինում:

ԱԲԳԱՐ (լաց լինելով)

Ա՛խ, վա՛յ, վա՛յ, վա՛յ

ՎԱՐԳԱՆ:

Սա երևի վախեցիկ է. ինչո՞ւ էր միայնակ այս
կողմը դալիս: Ինչո՞ւ թողիք:

ԵՐՈՒԱՆԻ:

Մենք թագ կացանք, ուղում էինք յանկարծ ձեզ
վերայ ընկնել երբ դուք այն սենեակով կանցեիք....

ՎԱՐԳԱՆ:

Դուք թագ կացա՞ք. հա՛, հա՛, հա՛: Այդ ի՞նչ
պէս եղաւ, որ մենք երկուսս էլ մէկ բան հնարե-
ցինք. մենք էլ իս թագ կացանք, հա՛, հա՛, հա՛,
(Երեւանները դուրս են գալիս իրենց տեղերէն)

ՏԻԳՐԱՆ (ԱԲԳԱՐԻՆ)

Է՛յ, վախկո՛ւ, վախկո՛ւ. քեզ վերաւորեցի՞ն

Թղթէ զնդակով վայ. է հաճանից:
ԱԲԳԱՐ:

Ես վախեցայ:

ՏԻԳՐԱՆ:

Ա՛յ թէ քաջ ես, ուղիղ որ լա՛ւ զխաւոր ես.
կեցցէ՛: Շքանշան իս չես ուղում որ տանք քաջու-
թեանդ համար:

ՄԵԿՐ (պահարանից):

Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք ցած գալու: (Բռնու՛մ են)

ԵՐՈՒԱՆԻ:

Այդ ու՞ր ես բարձրացել: Այդտեղից մեզ հետ
ի՞նչպէս պէտք է պատերազմէիր:

ՄԱՐԳԱՐԻՏ (Բաղդոցի տանից դուրս հայելով)

Օգնեցէ՛ք ինձ էլ դուրս գալու: Ես այնպէ՛ս
վախեցայ, այնպէ՛ս վախեցայ, երբ Աբգարը բղա-
ւեց, որ ինքս էլ չը զիտեմ ինչպէս թագ կացայ
այսպէս հեռու բազմոցի տակ:

ԵՐՈՒԱՆԻ:

Ա՛յ թէ քաջե՛ր ենք: (Ի ծաղու՛մ են)

ՏԻԳՐԱՆ:

Շատ քաջ զինուորանէ՛ր էք: Մութ սենեակը

մոնեւ չեն համարձակուամ թագ են կենում
այնպէս, որ էլ դուրս գալ չեն կարողանում, իսկ
էլի պատերազմել են ուզում:

ԱՐԳԱՐ:

Դու էլ ինձ ես հպարտ հպարտ խօսում: Լաւ
է որ ինքդ չես վախենում. եթէ ոչ, ուրիշ բան
կասէիր:

ԵՐՈՒԱՆԴ:

Դէհ, տղայք, թողնենք պատերազմը միւս ան-
գամի համար, երբ լոյս կը լինի և չենք էլ վախե-
նայ, որ մոմերը կը հանգցնենք


ՎԱՐԴԱՆ:

Այսպիսի պատերազմով մենք միմեանց քինթ
ու պռուզը կը ջարդենք և մեր ծնողներին կը բար-
կացնենք: Ոչ, աւելի լաւ է էլ այսպէս չը խա-
ղանք:

Վ Ե Ր Զ



Ծախսում է Տփլիսի գրադառու-
նոցներում.



8294000

3131

2015

ՀՀ Ազգային գրադարան



NL0007628

